ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆ
1915 - 2015

ՀԵՂԱԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՆՉԱԿՅԱՆ ՔՍԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2014

12.12.2014.

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Պ 505

Խորին շնորհակալություն եմ հայտնում *«Մուսալեռ Տպագրատուն»* ՍՊԸ գլխավոր տնօրեն Ռուբեն Հարությունյանին՝ սույն գիրքը տպագրելու համար:

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնում

Պետրոսյան Վ.
Պ 505 Հնչակյան քսան նահատակները/ Վ. Պետրոսյան. – Եր., Հեղ. հրատ., 2014. – 620 էջ:

Գիրքը նվիրված է 1915 թ. հունիսի 2/15-ին երիտթուրքական դատարանի վճռով կախաղանի միջոցով մահվան դատապարտված Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Փարամազի (Մաթևոս Սարգսյան) և նրա զինակիցների կյանքին ու գործունեությանը:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-0-1136-3

© Պետրոսյան Վ., 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրել միայն հնչակյան քսան նահատակների մասին անհնարին է առանց անդրադառնալու Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության գործունեության:

Ընթերցող հասարակայնության ուշադրությանը հանձնելով սույն գիրքը, նկատի ունենալով դրա համար նախատեսված ծավալը, ձգտել եմ, որքան հնարավոր է, համառոտակի ներկայացնել Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության այդ ժամանակաշրջանի պատմությունը:

Իհարկե, նաև գիտակցում եմ, որ անչափ դժվար է համառոտ, այն էլ ընդհանուր ուրվագծով ներկայացնել այդ կուսակցության շատ հարուստ և ուսանելի պատմությունը, մանավանդ, որ մեծ է նրա անուրանալի ծառայությունը հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարում:

Այս հանգամանքը հատուկ եմ ընդգծում, որովհետև Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության գործիչները խուսափել են իրենց մատուցած ծառայության մասին բարձրաձայն և հաճախ խոսել: Ինչպե՞ս կարող է ազնիվ որդին աղմկել իր ծնողին մատուցած ծառայության մասին:

Այսպիսի կեցվածքը, անպայման, պատիվ է բերում Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությանը, կուսակցություն, որը երբեք իրեն անսխալական չի համարել, սկզբունքային դիրքերից ընդունել է իր սխալները, և ձգտել է դրանք ուղղել և ոչ թե բարդել ուրիշների վրա:

Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունը կարող է հպարտանալ, որ իր շարքերում են ձևավորվել Փարամազի և մյուս նահատակների նման բյուրեղյա մաքրությամբ գործիչները, ազնիվ հայրենասերները, պայծառ հեղափոխականները, որոնք մինչև վերջին շունչը հավատարիմ են մնացել իրենց ընտրած ուղուն ու գաղափա-

«ՄՈՒՍԱԼԵՌ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ, 378352, գ. Մուսալեռ, Ռաֆֆու 1
հեռ.՝ +374 231 6 46 29, ֆաքս՝ +374 10 58 46 86
էլ. փոստ՝ moussaler@gmail.com
www.moussaler.com